

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐՏԻՆ ՎԱՐԴԱՆԻ

ԲԵՍԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԻՐԱՌՈՒՄԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՏԱԴԱՀԼԻՃԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐՈՒՄ

ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն»  
մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2013

---

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСКУССТВ

АРУТЮНЯН МАРТИН ВАРДАНОВИЧ

ВОЗМОЖНОЕ ИСПОЛЬЗОВАНИЕ СОВРЕМЕННЫХ СЦЕНИЧЕСКИХ  
ТЕХНОЛОГИЙ В РЕКОНСТРУКЦИЯХ ЗРИТЕЛЬНО-СЦЕНИЧЕСКИХ ЗДАНИЙ  
АРМЕНИИ

АВТОРЕФЕРАТ

Диссертации

на соискание ученой степени кандидата искусствоведения по специальности  
17.00.03 – “Изобразительное искусство, декоративное и прикладное искусство,  
дизайн”

ЕРЕВАН-2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի զեղարվեստի պետական ակադեմիայում

Գիտական ղեկավար՝ *Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր*  
**Քեղամենջյան Դավիթ Գրիգորի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ *արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր*  
**Աղայան Արարատ Վլադիմիրի**  
*արվեստագիտության թեկնածու*  
**Մելիքյան Սաթենիկ Հարությունի**

Առաջատար կազմակերպություն՝ *և՛ Արվյանի անվան հայկական պետական*  
*մանկավարժական համալսարան*

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. հունիսի 6-ին, ժամը 15.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. մայիսի 6-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Ասատրյան Ա. Գ.**

---

Тема диссертации утверждена в Ереванской государственной художественной академии

Научный руководитель – доктор архитектуры, профессор  
**Кертменджян Давид Григорьевич**

Официальные оппоненты – доктор искусствоведения, профессор  
**Агасян Арагат Владимирович**  
кандидат искусствоведения  
**Меликян Сатеник Арутюновна**

Ведущая организация - Армянский государственный педагогический  
университет имени Х. Абовяна

Защита диссертации состоится 6-го июня 2013 г. в 15.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 6-го мая 2013 г.

Ученый секретарь специализированного совета,  
доктор искусствоведения, профессор

**Асатрян А. Г.**

## ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայաստանն արդեն քսանամյա անկախ հանրապետություն է, որտեղ քայլ առ քայլ, տնտեսական և սոցիալական առաջընթացին զուգահեռ զարգանում են նաև մշակույթի հետ առնչվող բազմաթիվ և բազմազան նոր ոլորտներ: Թեև Հայաստանը դասվում է զարգացող երկրների շարքին, և արդեն նկատելի են որոշակի դրական փոփոխություններ, այնուամենայնիվ երկրի սոցիալ-հասարակական, տնտեսական և հատկապես մշակութային ոլորտներում կան զգալի չլուծված խնդիրներ: Այդ խնդիրների անհապաղ ուսումնասիրությունն ու լուծման ճիշտ տարբերակների մշակումն ու իրագործումը կխթանեն մշակութային հաստատությունների ճարտարապետական դեկորատիվ ու դիզայներական գործառույթների լիարժեք ու արդյունավետ իրացման գործընթացը, կաշխուժացնեն երկրի մշակութային մի շարք ոլորտների միապաղաղ ու ծանծրալի առօրյան, ինչպես նաև կբարձրացնեն հանրության գեղագիտական ճաշակն ու առավել ներգրավվածությունը տվյալ ոլորտների հետ առնչվող գործընթացներում:

Այսօր Հայաստանի Հանրապետության մեծ ու փոքր բնակավայրերում կան խորհրդային ժամանակներից ժառանգած բազմաթիվ դիտադահլիճային շենքեր և համակառույցներ: Դրանք մշակութային, ակումբային, վարչական շենքերն են, ուսումնադաստիարակչական ու գիտական հաստատությունները, գրադարանները, տարբեր ստեղծագործական միություններին պատկանող շինությունները և նմանատիպ այլ կառույցներ:

Այս տիպի շենքերն ու համակառույցները ոչ միայն ճշգրիտ չեն օգտագործվում, այլև տարեցտարի անխնա լքվում և ավերվում են. հաջորդաբար, դրանց տեղում կառուցվում են ժամանակակից, հաճախ կոմպոզիցիոն և դիզայներական առումներով ոչ լիարժեք կառույցներ: Ավելին, նմանատիպ կառույցներից շատերը այժմ ձևափոխվել են սպասարկման կամ հասարակական բնույթի այլևայլ օբյեկտների և այլևս չեն կարող շահագործվել որպես մշակութային հաստատություններ՝ բուն և հարակից տարածքների խեղաթյուրման կամ կից կառույցների հակաճարտարապետական, հակագեղագիտական փոփոխությունների, ինչպես նաև դիզայնի, դիզայներական ներդաշնակության լիակատար բացակայության և նմանատիպ այլ պատճառներով:

Վերոնշյալ գործունեությունը, բացի նրանից, որ ոչնչացնում է հայկական արդի ճարտարապետության բաղկացուցիչ շերտերից մեկը, նաև, անտեսելով ժամանակակից դիզայներական մոտեցումները, հարված է հասցնում երկրի տնտեսական բարեփոխման գործընթացին և խաթարում քաղաքների դեկորատիվ գեղագիտական համայնապատկերը: Ասվածը հատկապես վերաբերում է դիտադահլիճային շինությունների դահլիճներին ու դրանց

բեմական հատվածներին: Առավելագույն վատթար ու խեղաթյուրված վիճակում են գտնվում այս տիպի կառույցների բեմական հատվածները:

Ժամանակակից թատերական աշխարհը, որտեղ օրեցօր զարգանում են բազմազան նորագույն բեմական տեխնոլոգիական միջոցներն ու բազմազործառույթ դեկորացիաների համար նախատեսված այլ սարքերն ու սարքավորումները, պահանջում է նախկին դիտադահիլիճային կառույցների դահիլիճներում ու դրանց բեմական մասերում կիրառել բեմական արդիականացված ու դիզայներական ճիշտ լուծումներ ապահովող տեխնոլոգիաներ: Ատենախոսության թեման կարևորում է այդպիսի կառույցների դահիլիճային մասերի ու բեմական հատվածների ճշգրիտ ուսումնասիրությունը, դրանց արդիականացման ու բարելավման համար հնարավոր դեկորատիվ և դիզայներական ուղիների որոնումն ու վերհանումը:

**Ուսումնասիրության առարկան:** Հետազոտության մեջ մանրակրկիտ անդրադարձ է կատարվում Խորհրդային Հայաստանից ժառանգած այն շենքերին, որոնք ունեն դիտադահիլիճային ենթամասեր՝ մշակույթի պալատներ, մշակույթի կենտրոններ, մշակույթի տներ, ակումբներ, պիոներ-պալատներ (ինչպես դրանք կոչվում էին Խորհրդային Միության ժամանակաշրջանում), թատրոններ, գրադարաններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, վարչական կառույցներ, տիպային դպրոցներ, ինչպես նաև կրկեսային, օպերային կամ բացօթյա նմանատիպ այլ շինություններ: Ատենախոսության ուսումնասիրության առարկան Խորհրդային Հայաստանից ժառանգած այդ դիտադահիլիճային շենքերի (մշակույթի տներ, պալատներ, ակումբներ, գրադարաններ և այլն) ցուցակագրումն է, դրանց ներկա վիճակի մասնագիտական բնութագրումը, փաստագրական տվյալների մեկնաբանությունն ու վերլուծությունը, պիտանի նմուշների ընտրությունը, տիպաբանությունը, դրանց ներքին տարածքների ուսումնասիրությունը, դահիլիճների ռեգեներացիան, ադապտացիան, վերակառուցումը և արդիականացումը:

**Ուսումնասիրության նպատակն ու գիտական խնդիրները:** Հետազոտության հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության դիտադահիլիճային շինությունների բեմական մասերի ուսումնասիրումն ու դիզայնի արդիականացումը, որին հասնելու համար նպատակադրվել ենք՝

1. ցուցակագրել Խորհրդային Հայաստանից ժառանգած դիտադահիլիճային շենքերն ու շինությունները,
2. փաստագրական վերլուծության ենթարկել ընտրված դիտադահիլիճային շենքերը, դրանց դահիլիճներն ու բեմական հատվածները,
3. որոշակի մեթոդաբանության կիրառմամբ որոնել և գտնել ժամանակակից դիզայներական լուծումներ,

4. ուսումնասիրել արտերկրյա հեղինակավոր դիտադահլիճային կառույցների բեմական մասերը,
5. առաջարկել ուսումնասիրված ու փաստագրական վերլուծության ենթարկված դիտադահլիճային շենքերի դահլիճների և/կամ դրանց բեմական մասերի ադապտացիայի հնարավոր ուղիներ ու տարբերակներ:

**Թեմայի արդիականությունը:** Ատենախոսության թեման այսօր ավելի արդիական է, քան երբևէ: Մեր ուսումնասիրության առարկան հանդիսացող դիտադահլիճային շենքերը, որոնց բացարձակ մեծամասնությունը Խորհրդային ժամանակաշրջանից հետո երբևէ չի վերանորոգվել, իրականում կարող է արդիականացվել, հարմարեցվել ժամանակակից դիզայնի պահանջներին՝ զուգահեռաբար ենթարկվելով ռեգեներացիոն վերափոխումների, որոնք ոչ միայն կպահպանեն տվյալ ժառանգության ճարտարապետական ու դեկորատիվ արժեքը, այլև նոր կյանք և գեղագիտական հմայք կտան հայաստանյան դիտադահլիճային շինություններին:

Հետազոտությունը միտված է պիտանի դիտադահլիճային կառույցների կոմպոզիցիոն վերականգնման կամ դիզայնի արդիականացման ճիշտ ուղիներ նախանշելուն: Նույնիսկ բավականին հին կառույցների բեմական մասերը կարող են ենթարկվել ադապտացիայի՝ ժամանակակից դիզայնի արդիականացման ուղիների հնարավոր կիրառմամբ:

Ամփոփելի փաստ է, որ մարդկության պատմական զարգացման բոլոր ժամանակաշրջաններում կառուցվել են նոր և ժամանակակից շինություններ: Խնդիրն այն է, որ նորը չպետք է իրագործվի քաղաքների պատմական շերտերի լիակատար ոչնչացման ու խեղաթյուրման հաշվին: Սրան է տանում հասարակության ներդաշնակ զարգացման պրակտիկան ու առաջատար երկրների փորձը, և Հայաստանը այս առումով չպետք է բացառություն լինի: Սա ոչ միայն դասական, այլև խիստ արդիական մոտեցում է, որը վերաբերում է նաև ժամանակակից դիզայնի արդիականացման ուղիների կիրառմամբ դիտադահլիճային կառույցների բեմական մասերի արդիականացմանը՝ պահպանելով գեղագիտական ժառանգությունը, ճարտարապետական հորինվածքը, ճարտարապետադիզայնի արդիական հիմնական գործառնությունները. ավելին՝ դիզայնի արդիականացման ուղի և ավելի գործառնության մեթոդների առաջադրմամբ:

Արդիականացման ճիշտ գործընթացը ենթադրում և պահանջում է ձևափոխման, դիզայնի, կոմպոզիցիոն ձևավորման հնարավոր միջոցները կիրառել ոչ միայն դահլիճային մաս ունեցող կառույցների բեմական հատվածներում, այլև դահլիճի ինտերիերում՝ ձևափոխելով այս կառույցների էքստերիերային ոչ մի նախագիծ: Այս պնդումը ատենախոսության կարևոր հիմնադրույթներից մեկն է, եթե ոչ ամենակարևորը:

Արդիականացումը նպատակահարմար է իրականացնել շինությունների ճարտարապետադիզայներական ուսումնասիրություններին զուգահեռ, այսինքն՝ կիսավեր, վթարային, լքված ու ձևափոխված դիտադահլիճային կառույցի բեմական մասերի կամ դահլիճային հատվածների ադապտացիան անհնար է իրականացնել առանց նախնական մանրակրկիտ ուսումնասիրությունների: Այսպիսին է արդի ճարտարապետության և դիզայնի հուշարձանապահպանության նպատակը և այն մեթոդյա առավել տարածված ու արդարացված մեթոդներից մեկն է:

Խորհրդային կարգերի փլուզումից շուրջ երկու տասնյակ տարի անց հայաստանյան դիտադահլիճային շինությունների վիճակը անմխիթար է և տարեցտարի դրանք ավելի ու ավելի են ավերվում: Որոշ ժամանակ անց արդեն հնարավոր չի լինի վերականգնել դրանցից շատերը: Այնուամենայնիվ, ցայսօր Հայաստանի դիտադահլիճային շենքերի հետ կապված խնդիրներին լրջորեն չեն անդրադարձել արվեստաբանները, ճարտարապետներն ու դիզայներները: Հատուկենտ անդրադարձերը մակերեսային են և կրում են հրապարակախոսական, այլ ոչ թե մասնագիտական բնույթ: Առավել ևս ուշադրության չի արժանացել Հայաստանի դիտադահլիճային շինությունների բեմական մասերի ներկայիս վիճակը, անտեսվել են դրանց վերափոխման, վերակառուցման կամ վերանախագծման հնարավորությունները, դիզայներական ճիշտ միջամտությունները և այլն: Այս առումով ատենախոսությունը առաջինն է, որ անդրադառնում է վերոնշյալ խնդիրն և առաջադրում է լուծումներ:

**Ատենախոսության աշխարհագրական և ժամանակագրական սահմանները:** Աշխարհագրական առումով բեմական մասեր ունեցող դիտադահլիճային շենքեր կան Հայաստանի Հանրապետության շատ մարզերում, և ատենախոսության շրջանակներում անդրադարձ է կատարվել ոչ միայն Երևանի, այլև Խորհրդային Հայաստանի ճարտարապետական ժառանգություն համարվող մարզային նմանատիպ կառույցներին: Սույն ատենախոսության սահմաններում, այնուամենայնիվ, քննության հիմնական առարկա են դարձել Երևանում գործող դիտադահլիճները, քանի որ տվյալ կառույցների բացարձակ մեծամասնությունը կենտրոնացած է մայրաքաղաք Երևանում: Այս տիպի շենքերից շատերը ժամանակակից օգտագործման համար կարիք ունեն փոփոխությունների և արդիականացման:

Պատմական առումով ուսումնասիրվող շենքերը պատկանում են Խորհրդային Հայաստանի ժամանակաշրջանին, սակայն դիզայներական տիպաբանական և տեխնոլոգիական խնդիրների ճշգրիտ լուծումներ գտնելու նպատակով նաև էքսկուրսներ են կատարվել դեպի համաշխարհային դիզայնի և ճարտարապետության զարգացման անտիկ, վերածնդի, բարոկկոյի, նոր

դասականության, ինչպես նաև արդի ճարտարապետության ժամանակաշրջաններին: Միջազգային դիտադահլիճային կառույցների համեմատական-գուգադրական ուսումնասիրություններ կատարելու նպատակով տեղային այցելությունների ընթացքում մանրամասն հետազոտվել է տվյալ ոլորտի համաշխարհային պրակտիկան:

**Գիտական նորույթը:** Առաջին անգամ Հայաստանի Հանրապետության դիզայնի պատմության մեջ, ինչպես նաև դիզայնի ոլորտում, ցուցակագրվում են ՀՀ դիտադահլիճային շենքերը, դրանցից շատերը ենթարկվում են փաստագրական վերլուծության, քննարկվում ու առաջարկվում են դիտադահլիճային կառույցների բեմական մասերի կոմպոզիցիոն արդիականացման հնարավոր և պատճառաբանված տարբերակներ:

Հետազոտության մեջ նաև փորձ է արվում տեսական հետազոտություններից անցում կատարել գործնական կիրառություններին և լուծել Հայաստանի Հանրապետության մի շարք մշակութային ու ուսումնադաստիարակչական շենքերի անմխիթար վիճակի հետ կապված խնդիրները՝ դիտադահլիճի վերականգնման միջոցով պիտանելի և կիրառելի դարձնել տվյալ շինությունը:

Համեստության դեմ մեղանչած չենք լինի, եթե ասենք, որ ատենախոսությունը իրոք կարևորվում է ինչպես գիտական և առարկայական նյութի բազմակողմանի, մանրակրկիտ և խորը ուսումնասիրությամբ, այնպես էլ գեղարվեստական, դեկորատիվ և կոմպոզիցիոն դիզայնի ոլորտի վերջնական հետազոտական և կիրառական հանգուցալուծումներով, եզրակացություններով, առաջարկներով և նորույթներով:

**Ուսումնասիրության գրականության տեսությունը:** Փաստ է, որ Խորհրդային յոթանասուն տարիների ընթացքում բնակելի ու գործարանային շինություններից բացի կառուցվել են նաև հազարավոր մշակութային շինություններ: Նման կառույցների զարգացումը այնքան էր կարևորվում, որ նույնիսկ գործարաններն ու հիմնարկներն ունեին առանձին ակումբներ կամ մշակույթի տներ: Ցավոք, այսօր միայն մեծ դժվարությամբ կարելի է գտնել նախկին այդ դիտադահլիճային կառույցների հասցեները կամ դրանց վերաբերյալ արխիվային նյութեր:

Այնուամենայնիվ մեզ հաջողվել է հայաստանյան դիտադահլիճային շինություններին վերաբերող բազմաթիվ աղբյուրներ գտնել զանազան արխիվներում ու նախագծային ինստիտուտների ֆոնդերում: Այս փաստական նյութը երբևէ գիտահետազոտական քննության առարկա չի դարձել:

Տվյալ ատենախոսության շրջանակներում անդրադարձել ենք բազմաթիվ աղբյուրների, հավաքել բազմազան և բազմաբնույթ

փաստագրամատենագիտական տեղեկություններ, հետազոտել և կորոդինացրել շենքերի արխիվային տվյալներ, նախագծեր:

Եվս մեկ անգամ նշենք, որ առարկայական աղբյուրների ցանկում ընդգրկված են Խորհրդային Հայաստանի ժամանակաշրջանում լայն տարածում գտած ակումբային շենքերը, մշակույթի պալատներն ու տները, թատրոնները, գրադարանները, բարձրագույն ուսումնական հաստատությունների դահլիճային մաս կազմող հատվածները, ինչպես նաև վերջին տասնամյակում վերածնափոխված մի շարք մշակութային կառույցներ՝ վերանվանված հայրողաց երիտասարդական կենտրոնների և այլ նման շինություններ:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունում գտնվող նմանատիպ շենքերի բացարձակ մեծամասնությունը կառուցվել է Խորհրդային Հայաստանի տարիներին, ուստի թեմայի ուսումնասիրության համար օգտագործվել են հենց Խորհրդային Հայաստանի ժամանակաշրջանի բեմական մասեր ունեցող շինությունները: Դրանցից հետազոտության համար ընտրվել են այն կառույցները, որոնք ավելի պիտանի կամ ավելի հասանելի են, քանի որ ակումբային ու մշակութային նմանատիպ կառույցներից շատերի մասին այսօր անհնար է գտնել որևէ տեղեկատվություն՝ դրանցից որոշները հիմնովին ավերվել են, մի այլ մասը արմատապես ձևափոխվել: Հնարավորինս փորձել ենք ցուցակագրել ներկայումս մնացած դիտադահլիճային կառույցները՝ ներկայացնելով այս պահին առկա դիզայներական առումով պահպանվածության աստիճանը:

Փաստական նյութն ընդգրկում է ոչ միայն արխիվային տվյալներ, այլև այդ շինությունների կառուցման գործին մասնակցած մասնագետների ու վարչական կառույցների աշխատակիցների անհատական գրառումներ և տեղային տարբեր դիտարկումների ու ուսումնասիրությունների եզրակացություններ:

Համապատասխան նախագծերը վերցվել են Հայաստանի ազգային արխիվից, որտեղ կատարվել են կառույցների նախագծման ու պատմության հետ կապված բազմաբնույթ աշխատանքներ: Տվյալ կառույցի չափագրման և ճարտարապետական այլ մանրամասների արխիվային տվյալների բացակայության դեպքում դրանք ճշտվել են տեղում՝ այցելելով տվյալ շինություն և կատարելով համապատասխան ուսումնասիրություններ:

Բեմական արվեստի, գեղարվեստական և կոմպոզիցիոն դիզայնի ու բեմական հատվածներում աշխատող այլ մասնագետների հետ հանդիպումները տեղի են ունեցել Հայաստանում, Ֆրանսիայում ու Շվեյցարիայում: Տեղային այցելություններ և դիտարկումներ են կատարվել ինչպես Հայաստանի մի շարք քաղաքներում՝ Երևան, Գյումրի, Էջմիածին, այնպես էլ Ֆրանսիայի ու Շվեյցարիայի դիտադահլիճային կառույցներով հարուստ քաղաքներում՝ Լիոն,



Գրենոբլ և Ժնև:

Քանի որ միջազգային դիտադափախման կառույցների բեմական մասերի նախագծման պատմական փորձն ու նամանավանդ ժամանակակից դիզայներական լուծումները չափազանց կարևոր են տվյալ ուսումնասիրության համար՝ չափազանցություն չի լինի ասել, որ տվյալ խնդրի վերաբերյալ օտարալեզու գրականությունը, միջազգային տեղային դիտարկումներն ու արտերկրյա բեմական մասնագետների հետ հանդիպումները մեծապես նպաստել են մեր առջև դրված խնդիրների լուծմանը:

Տեղային դիտարկումների արդյունքում մասնավորապես ուսումնասիրվել են արտերկրյա դիտադափախման շինությունների ու կառույցների ներկա վիճակն ու վերանախագծումների պատմությունը: Մասնագիտական կոնսուլտացիաներ ու խորհրդակցություններ են անցկացվել Լիոնի ազգային օպերայի, Ժնևի Մեծ և Լիոնի «Սելեստինս» թատրոնների և այլ հաստատությունների բեմի տեխնոլոգների ու դեկորացիաների մասնագետների հետ: Այլ խոսքով, ուսումնասիրվել են առաջավոր երկրների բեմական տեխնոլոգիաների զարգացման ընթացքն ու փորձը՝ դրանք հայաստանյան համանման կառույցներում կիրառելու ակնկալիքով:

Հետազոտության համար կարևորում ենք նաև տարբեր գրադարաններում կատարած աշխատանքը և ձեռք բերած տվյալները՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գրադարան (ք. Երևան), ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարան (ք. Երևան), Լիոնի գեղարվեստի բարձրագույն պետական դպրոցի գրադարան (ք. Լիոն), Վեզի համայնքային գրադարան (ք. Լիոն), Թատերական արվեստի ու տեխնիկայի բարձրագույն դպրոցի գրադարան (ք. Լիոն), Գրենոբլի քաղաքային գրադարան (ք. Գրենոբլ), Ժնևի քաղաքային գրադարան (ք. Ժնև): Հայաստանյան գրադարաններում հայտնաբերել և ուսումնասիրել ենք թեմայի հետ այս կամ այն չափով առնչվող հայ հեղինակների հրատարակած մոտ մեկ տասնյակ աշխատություն:

Ատենախոսության մեջ քննարկվող կառույցների, ինչպես նաև դրանց բեմական հատվածների ցուցակագրման, փաստագրական վերլուծությունների, արդիականացման հետ կապված եզրահանգումները կատարվել են թե՛ ամբողջ, և թե՛ առանձին կառույցների օրինակներով:

**Հետազոտման մեթոդաբանությունը:** Հետազոտությունները կատարվել են փաստագրական վերլուծության մեթոդի կիրառմամբ: Տվյալ մեթոդով դիտարկվել են Հայաստանի դիտադափախման շենքերն ու շինությունները: Համեմատական հետազոտությունների մեթոդի կիրառմամբ միջազգային առաջատար դիտադափախման շինությունների դափախմաների ու դրանց բեմական հատվածների նորագույն տեխնոլոգիաների ուսումնասիրության արդյունքում առաջարկել ենք իրականացնել հայաստանյան դիտադափախման կառույցների

արդիականացում՝ հիմնված դիզայներական և տեխնոլոգիական նորագույն լուծումների վրա:

Ցուցակագրման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել նաև դիտադահլիճների ներկայիս տեսքին՝ յուրաքանչյուր շինությանը տալով դիզայներական գնահատական, արժևորելով, թե ինչ վիճակում է գտնվում շենքը, նրա բեմական հատվածը, նպատակահարմար և հնարավոր է արդյոք տվյալ կառույցի դիզայներական արդիականացումն ու վերաշահագործումը կամ իրատեսական է արդյոք դրա իրականացումն այսօր:

**Աշխատանքի փորձաքննությունը և հրապարակումները:**

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնում:

Հրատարակվել են չորս գիտական հոդվածներ Հայաստանի գիտական հանդեսներում:

Ատենախոսության թեման մասնակցել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի «Ասպիրանտների հետազոտությունների աջակցություն - 2012» ծրագրին՝ ստանալով Հայաստանի, ինչպես նաև մի քանի այլ երկրների փորձագիտական ու մասնագիտական խորհուրդների բարձր գնահատականը և արժանացել դրամաշնորհի:

**Աշխատանքի կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից («Խորհրդային Հայաստանի ճարտարապետական ժառանգության դիտադահլիճային մասեր ունեցող համակառույցները և դրանց փաստագրումը», «Դիտադահլիճային շենքերի դահլիճների փոխակերպումը, բեմական մասերի տեխնոլոգիաները և դրանց դիզայնը միջազգային զուգահեռներում», «Խորհրդային Միությունից ժառանգած դիտադահլիճային շենքերը, դրանց բեմական մասերի վերակառուցումը և գեղարվեստական դիզայնը»), որոնք (բացի երրորդ գլխից) ունեն համապատասխան ենթաբաժիններ:

Աշխատանքում արծարծված հիմնահարցերը և դրանց հնարավոր լուծումները ամփոփվել են եզրակացություններում: Օգտագործված գրականության ցանկը պարունակում է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով շուրջ ութսուն մասնագիտական աշխատություններ, ինչպես նաև հանրագիտարաններ, բառարաններ, արխիվային և թանգարանային նյութեր, ֆրանսերեն լեզվով մասնագիտական ուղղվածության ամսագրեր, ինտերնետային կայքերի հղումներ: Ատենախոսության կարևոր և անբաժանելի մաս են կազմում հավելվածները, որոնք ներառում են փաստագրական աշխատանքների արդյունքում կազմված ցուցակներ, իլյուստրատիվ աղյուսակներ, սխեմատիկ բացատրություններ:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**ԳՆՈՒՆ ԱՌԱՋԻՆ**  
**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ**  
**ՂԻՏԱՐԱՀԼԻՃԱՅԻՆ ՄԱՍԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ**  
**ՓԱՍՏԱԳՐՈՒՄԸ**

Ատենախոսության մեջ ներկայացված և ուսումնասիրված դիտադաիլիճային շենքերը բազմազան են և բազմաբնույթ: Դրանք ընդգրկում են ուսումնադաստիարակչական շենքեր (դպրոցներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, քոլեջներ, միջին մասնագիտական հաստատություններ), մշակութային շենքեր (թատրոններ, ակումբներ, պիոներ պալատներ, հայրողաց երիտասարդական կենտրոններ, մշակույթի տներ, մշակույթի պալատներ, գրադարաններ), վարչական շենքեր և այլն:

Նշված շենքերի զգալի մասը (կարելի է ասել նույնիսկ բոլորը) կառուցվել են խորհրդային ժամանակաշրջանում: Անժխտելի փաստ է, որ խորհրդային Հայաստանում առանձնակի ուշադրությամբ ու ճարտարապետական հստակ կանոնների կիրառմամբ կառուցվել են հազարավոր մշակութային ու դիտադաիլիճային շինություններ: Այդ ժամանակաշրջանում Հայաստանի գրեթե բոլոր շրջաններն ունեին մշակութային ակումբներ, պիոներների համար նախատեսված կառույցներ, հասարակության մշակութային զարգացմանը նպաստող այնպիսի շինություններ, ինչպիսիք են թատրոնները, մշակույթի տները, կինոթատրոնները ու այլ դիտադաիլիճային կառույցները, որոնք ըստ ժամանակի գաղափարախոսության պետք է նպաստեին հասարակության մտավոր և գեղագիտական առաջընթացին և սպորտային ունակությունների զարգացմանը:

Ճարտարապետական ու շինարարական անվտանգության մի շարք կարևոր լուծումներից բացի ատենախոսության մեջ ուսումնասիրված բոլոր դաիլիճային մասեր ու բեմական հատվածներ ունեցող շինություններում էլ իրականացվել են որոշակի և ակնհայտ դիզայներական աշխատանքներ: Թեև խորհրդային ժամանակաշրջանի նախագծողներին ու կառուցողներին բնորոշ էր «դիզայներական միջոցառումներ» կամ «դիզայներական նորագույն լուծումներ» աշխատանքային տերմինների կիրառումը ինչպես ներկայումս, այնուամենայնիվ գործնականում նրանք առաջնորդվում էին ժամանակաշրջանի համար ակտուալ համարվող մի շարք տեխնիկական, դիզայներական, գեղագիտական, կոմպոզիցիոն, էրգոնոմիկ սկզբունքներով:

Նոր շինությունների կառուցման գործընթացին զուգահեռ 80-90 տարիների ընթացքում բազմաթիվ անգամներ փոփոխվել են էրգոնոմիկ ու

դիզայներական մի շարք կանոններ, որոնք անդրադարձել են նաև մշակութային կառույցների վրա: Հասարակության մտավոր, մասնագիտական և առօրյա կենցաղային մակարդակի փոփոխությունը նույնպես տեսանելիորեն արտացոլվել է ճարտարապետության ու դիզայնի մեջ:

Շենքերի ճարտարապետության զարգացմանը զուգահեռ կազմավորվել և զարգացել է դրանց դիզայնը:

Պատմական առումով կարևոր է նշել, որ Խորհրդային Հայաստանի ժամանակաշրջանից ժառանգած շենքերի դահլիճային մասերն անցել են պատմական օրինաչափ ուղի:

Մշակութային այս կառույցների դահլիճներից բացի ուշագրավ են նաև ուսումնադաստիարակչական կառույցների՝ տիպային դպրոցների, գրադարանային շենքերի և պիոներ պալատների դահլիճներն ու բեմական մասերը: Այդուհանդերձ պետք է նշել, որ վերը թվարկվածների դիզայներական լուծումները չափազանց հասարակ և պարզունակ են: Պետք է նաև փաստել, որ այս խմբին պատկանող կառույցները թե՛ խորհրդային ժամանակաշրջանի զարգացման տարբեր փուլերում և թե՛ դրանից հետո շարունակվել են նախագծվել դիզայներական թերի չափանիշներով, այն դեպքում, երբ միջազգային դիտադահլիճային շինությունների այս խմբին պատկանող կառույցների բեմական հատվածները նախագծվել են մշակութային կառույցների բեմական հատվածների առաջադեմ չափորոշիչներով՝ դիզայներական ճիշտ կոմպոզիցիոն և նորագույն տեխնոլոգիական լուծումներով:

Ուսումնասիրություն նանդրադառնում է ՀՀ տարածքում գտնվող դիտադահլիճային շինությունների և շենքերի մեր կողմից կատարած ցուցակագրմանը ու դրանց պիտանի օրինակների ընտրությանը՝ բեմական հատվածների արդիականացման նախագծեր կազմելու ու դիզայներական լուծումներ առաջարկելու համար:

Խորհրդային Հայաստանի ժամանակաշրջանից ժառանգած ակունքային շենքերը, թատրոնները, մշակույթի պալատներն ու տները հայկական արդի ճարտարապետության կարևոր նվաճումներից են: Սա է պատճառը, որ մեր հետազոտության մեջ կարևորում ենք այս շենքերի ուսումնասիրությունը և քննարկում դրանց գործառական կիրառման պիտանելիությունը՝ դիզայներական լուծումներ գտնելու և կիրառելու ակնկալիքով:

Նշված դիտադահլիճային շենքերը տարբեր աշխատություններում և արխիվներում արտացոլվել են փոփոխվող քանակությամբ և նպատակներով. տարիների ընթացքում փոխվել է դրանց թվաքանակը, ձևափոխվել ճարտարապետական տեսքը, որոշ մասը անվանափոխվել է՝ վերաշահագործվելով այլ հասարակական կառույցների:

Ներկայում այդ շինությունների փաստագրումը, տարածքների

ուսումնասիրությունն ու ժամանակակից կիրառման հնարավորություններին համապատասխան դիզայներական մասնագիտական ձևափոխություններ կատարելը շատ հրատապ է, քանի որ որոշ ժամանակ հետո դրանցից շատերն անդառնալիորեն կանհետանան:

Ըմբռնելով վերոնշյալ գործի կարևորությունը՝ նպատակ է դրվել հավաքել դիտարդիվատային մասեր ունեցող շենքերի կարևորագույն նմուշ-օրինակներ, դրանք ցուցակագրել և դասակարգել, խորությամբ ուսումնասիրել հավաքած տվյալները: Կուզենայինք նշել, որ հայաստանյան պետական գերատեսչական կառույցներից շինությունների ցուցակներ ստանալը շատ բարդ և երբեմն նույնիսկ անհնարին գործընթաց է: Ներկայում գոյություն չունի որևէ մեկ առանձին կառույց, որը կարողանա տրամադրել հայաստանյան մշակութային շինությունների հստակ ցանկ: Պատճառն այն է, որ տարբեր քաղաքներում, տարբեր գյուղերում վերոնշյալ շինությունները գտնվում են բազմաթիվ տարբեր գերատեսչությունների վերահսկողության տակ, օրինակ, մշակութային մի շարք կառույցներ կամ հաստատություններ պատկանում են որևէ նախարարության, մի այլ շարք՝ քաղաքապետարաններին, մի ուրիշը՝ գյուղապետարաններին և այսպես շարունակ:

Համառ աշխատանքի շնորհիվ ցուցակագրման համար նյութեր են ձեռք բերվել նախարարություններից, քաղաքապետարաններից, մարզպետարաններից ու վարչական շրջանների այլ կառույցներից, ինչպես նաև պետական պաշտոնական ու լրատվական կայքերից, նաև որոշ գիտական աշխատություններից ու ՀՀ ազգային արխիվից: Ցուցակագրման աշխատանքները պատշաճ ավարտին հասցնելու համար դիմել ենք թե՛ պետական, թե՛ ոչ պետական բազմաթիվ հաստատությունների և նաև հետազոտել դրանց պաշտոնական կայքերը: Հաշվի ենք առել նաև բազմաթիվ և բազմազան փաստաթղթային գրագրություններ ու հաղորդագրություններ:

Կարևոր ենք համարում նաև մեր կողմից իրականացրած անհատական տեղային դիտարկումներն ու համապատասխան գրառումները:

Ակումբային և մշակութային շինություններն ամբողջ հանրապետությունում ըստ արխիվային նյութերի և նախարարությունների կայքերի, ինչպես նաև տարբեր պետական հաստատությունների տրամադրված ցանկերի, հասնում է մոտ երկու հազարի: Սակայն փաստ է, որ դրանցից շատ շատերն այսօր գոյություն չունեն: Պատճառները շատ են՝ երկրաշարժ, խորհրդային կարգերի փլուզում, կառույցների, շինությունների ու տարածքների մասնավորեցում, դրանց անխնա ձևափոխում բնակելի կամ հասարակական այլ կառույցների, ինչպես նաև սերնդափոխություն, հասարակական այլ պահանջներ և այլն: Նույնիսկ պետական հաստատություններից ձեռք բերած կառույցների ցանկերն ու դրանց վերաբերող փաստագրական տվյալներն ու այլ արխիվային

նյութերը շատ հաճախ ճշգրիտ ու հստակ փաստեր ու տեղեկություններ չեն պարունակում, քանի որ, ինչպես նշվեց, տեղի են ունեցել բազմաբնույթ փոփոխություններ:

Չնայած այս բոլոր դժվարություններին ու խոչընդոտներին, փորձել ենք մեր ցուցակագրած ցանկերում հանրապետությունում առկա դիտադախիչձային ենթամասեր ունեցող կառույցներն ու դրանց ներկա վիճակի վերաբերյալ տվյալները ներկայացնել մաքսիմալ ճշգրտությամբ:

Ստորև ներկայացնում ենք մշակութային կառույցների այն խմբերը, որոնք ունեն բեմական հատվածներ և որոնք քննարկվել են հետազոտության հաջորդ գլուխներում՝ առավել հաջող նմուշ-օրինակների բեմական մասերի մոդեռնիզացիայի հնարավոր տարբերակներ կամ դիզայնի արական նոր լուծումներ առաջարկելու և իրականացնելու ակնկալիքով:

**Բեմական հատվածներ ունեցող կառույցների և հաստատությունների ցուցակ**

- ա) ակումբներ, մշակույթի տներ, մշակույթի պալատներ,
- բ) հայորդաց երիտասարդական կենտրոններ (տներ)՝ նախկին պիոներ պալատներ,
- գ) թատրոններ,
- դ) կրտսեր, միջին, ավագ և արվեստի դպրոցներ,
- ե) բարձրագույն ուսումնական հաստատություններ
- զ) գրադարաններ,
- է) այլ շենքեր (ստեղծագործական միություններ, արհեստակցական միավորումներ, վարչական կառույցներ՝ քաղաքապետարաններ, թաղապետարաններ, դատարաններ և այլն):

